ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՐԱԲԿԻՐ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՀՐ. ՆԵՐՍԻՍՅԱՆ Փ., մասնաշենք 10)

գործ թիվ ԵԴ2/2941/02/24

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՈՐԾԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

նախագահող դատավոր Ա. Շիլաջյանի

2024 թվականի օգոստոսի 23-ին քաղաք Երևան

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ նաև՝ Դատարան), ուսումնասիրելով թիվ ԵԴ2/2941/02/24 քաղաքացիական գործը,

ՊԱՐԶԵՑ

Գրանթ Թորնթոն ՓԲ ընկերության ներկայացուցիչը, Բի-Դի-Օ Արմենիա ՓԲ ընկերության անունից Ռոզա Սիսակի Աբրահամյանը հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կարիքների համար աուդիտորական ծառայությունների մատուցման ձեռքբերման նպատակով հայտարարված ՀԾԿՀ-24/4-ԳՀԾՁԲ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Դատարանի (դատավոր՝ Ա. Ստեփանյան) 19.04.2024 թվականի որոշմամբ հայցադիմումն վերադարձվել է:
Հայցվորի ներկայացուցիչը հայցադիմումը վերադարձնելու մասին Դատարանի որոշումը, հայցադիմումն ու դրան կից փաստաթղթերը ստանալուց հետո եռօրյա ժամկետում այն կրկին ներկայացրել է Դատարան:
Դատարանի (դատավոր՝ Ա. Ստեփանյան) 29.04.2024 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ, պատասխանող ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովից պահանջվել է թիվ ՀԾԿՀ-24/4-ԳՀԾՁԲ ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները, որոշվել է եզրափակիչ դատական ակտը հրապարակել 12.06.2024 թվականին:
Դատարանի (դատավոր՝ Ա. Ստեփանյան) 12.06.2024 թվականի որոշմամբ գործի քննության ժամկետը երկարաձգվել է, որոշվել է եզրափակիչ դատական ակտը հրապարակել 20.06.2024 թվականին՝ դատական իշխանության պաշտոնական կայքում:
Թիվ ԵԴ2/2941/02/24 քաղաքացիական գործը 20.08.2024 թվականին էլեկտրոնային դատավարության համակարգի միջոցով մակագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Շիլաջյանին:
Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 188-րդ, 199-րդ, 200-րդ և 234.5-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑ

1. Գործն ընդունել վարույթ և եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2024 թվականի հոկտեմբերի 4-ին՝ դատական իշխանության պաշտոնական կայքում:
2. Որոշումն անհապաղ ուղարկել լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Աննա Շիլաջյան

Digitally signed by SHILAJYAN ANNA 5208910872
Date: 2024.08.23 18:00:53 AMT